

ՀՏԴ 581.92

Կենսաբանություն

**ԱՐՅԱԽՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՈՐՈՇ ԵԹԵՐԱՅՈՒՂԱՏՈՒ ԲՈՒՅՄԵՐԻ
ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՍԸ
Արմիդա ՀԱԿՈԲՅԱՆ**

Բանալի բառեր՝ էթերայուղ, էթերայուղատու բույսեր, կատվախոտ դեղատու, գիհի սովորական, հազարատերևուկ սովորական, ուրց սովորական, կղմուխ բարձր, սրոհունդ, երիցուկ, ռեհան, նանա, ֆիտոնցիդներ:

Ключевые слова: эфирное масло, эфирно-масленные растение, валериана лекарственная, можжевельник обыкновенный, тимьян обыкновенный, тысячелистник обыкновенный, девясил высокий, зверобой, ромашка, базилик, мята, фитонциды.

Keywords: essentialoil, essentialoil plant, Valeriana officinalis, Juniperis communis, Achilea millefolium, Thimus vulgaris, Inula helenium, Hypericum, Matricharia, O. basilicum, Mentha, phytoncides.

ВИДОВОЙ СОСТАВ И ЗНАЧЕНИЕ РАСПРОСТРАНЕННЫХ В АРЦАХЕ НЕКОТОРЫХ ЭФИРНО-МАСЛЕННЫХ РАСТЕНИЙ

А.Н.Акопян

Эфирно-масленные растения являются частью биоразнообразия Арцаха, которые население использует в качестве приправ, лекарственных растений и т.д. Мы изучили распространенность девяти эфирно-масленных растений в Арцахе и их значение. Наши исследования будут продолжаться.

SPECIES COMPOSITION AND VALUE OF SOME ESSENTIAL-OIL PLANTS COMMON IN ARTSAKH

A.N.Hakobyan

Essential oil plants are part of the biodiversity of Artsakh, which the population uses as seasonings, medicinal plants or for another purposes. We studied the prevalence of nine ethereal-oil plants in Artsakh and their significance. Our research is to be continued.

Արցախի կենսաբազմազանության մի մասն են կազմում էթերայուղատու բույսերը, որոնք բնակչությունն օգտագործում է որպես համեմունք, դեղաբույս և այլ նպատակներով: Մեր կողմից հետազոտվել է բնակչության կողմից հաճախակի օգտագործվող ինը էթերայուղատու բույսերի տարածվածությունն Արցախում և դրանց նշանակությունը: Մեր հետազոտությունները շարունակական բնույթ կկրեն:

Բույսերի զանազան օրգանների, հատկապես ծաղիկների բնորոշ բուրմունքը կախված է էթերայուղերից, որոնց քիմիական կազմը տարբեր է: Եթերայուղերի բաղադրիչ մասն են կազմում օրգանական միացությունները, որոնց քանակությունը կարող է տատանվել 5-20-ի սահմաններում: Հայտնաբերված են մոտ 500 տարբեր միացություններ, որոնք մտնում են էթերայուղերի բաղադրության մեջ (1): Եթերատու բույսերը պատկանում են հետևյալ ընտանիքներին. նեխուրազգիներ (գինձ, քեմոն, անիսոն, հոռոմսամիթ և այլն), խուլեղինջազգիներ (դադձ, եղեսպակ մշկահոտ, ռեհան, նարդոս և այլն), վարդազգիներ (վարդենի), խորդենազգիներ (վարդաբույր խորդենի), շքանարգիզազգիներ (բրաբին), ձիթենազգիներ (հասմիկ, եղրևանի), հիրիկազգիներ (հիրիկ) և այլն: Համարյա բոլոր էթերայուղատու բույսերը պարունակում են ֆիտոնցիդներ (2):

Եթերայուղեր կարող են արտադրել բույսի տարբեր օրգանները և հյուսվածքները: Այսպես, դրանք պարունակվում են սերմերում (մուսկատ, ռեհան, ուրց), տերևներում (դադձ), կեղևում (դարչին), արմատներում և կոճղարմատներում (կոճապղպեղ, մասուր, խնկեղեգ), բնափայտում (պիստակենի): Եթերայուղերով հարուստ են հատկապես բույսերի ծաղիկները:

Մաքուր վիճակում էթերային յուղերը, հիմնականում, անգույն կամ դեղնավուն թափանցիկ հեղուկներ են, սակայն հանդիպում են նաև շագանակագույն, կարմիր (ուրցի յուղը), կապույտ (երիցուկի յուղը): Սրանք հեշտ ցնդող են, ունեն արմատիկ հոտ, դուրալի համ, մեծամասամբ ջրից փոքր տեսակարար զանգված (սակայն մեխակի յուղը ջրից ծանր է): Եթերային յուղերը

ցուցաբերում են հակամիկրոբային, հակավիրուսային ազդեցություն, պաշտպանում են բոլոր հիվանդություններից: Դուրեկան հոտերի շնորհիվ եթերայուղ պարունակող բույսերն իրենց են ձգում վնասատուներին: Եթերային յուղերի կուտակման և նրանց որակական կազմի վրա մեծ ազդեցություն ունեն բույսերի վեգետացիոն փուլը և տարիքը (եթերային յուղերի քանակը երիտասարդ բույսերի և բույսի երիտասարդ մասերի մոտ մեծ է), աշխարհագրական տարածքը (եթերային յուղերը հարավում ավելի շատ են կուտակվում բույսի մեջ քան հյուսիսում աճողների մոտ), ծովի մակարդակից բարձրությունը, խոնավությունը և այլ գործոններ: Եթերայուղերի մեծ տոկոս լինում է բույսի զարգացման ամենաինտենսիվ փուլում՝ հասունացման շրջանում:

Եթերայուղատու բույսերի հավաքն ու չորացումն ունեն որոշ յուրահատկություններ: Առաջին հերթին դեղաբուսական հումքի որակը գնահատվում է՝ ելնելով նրանում պարունակվող կենսաբանական ակտիվ նյութերի քանակից: Այս նյութերի կուտակումն ունի յուրահատուկ դիսամիկա: Հումքի հավաքը պետք է կատարվի բույսի զարգացման այն շրջանում, երբ պարունակվող կենսաբանական ակտիվ նյութը բույսում հասել է առավելագույնի: Բացի դրանից հաշվի է առնվում նաև արդյունաբերական կուլտուրայի բեքքատվությունը: Դեղաբույսերի մեծ խմբի համար հավաքի լավագույն ժամը համարվում է ցերեկվա 10⁰⁰-13⁰⁰ ընկած ժամանակը, որովհետև այդ ընթացքում նրանցում կենսաբանական ակտիվ նյութերի քանակն առավելագույնն է: Եթերային յուղեր պարունակող հումքը, սակայն, խորհուրդ է տրվում հավաքել առավոտյան ժամերին: Բույսերի վերգետնյա մասերը (ընձյուղ, տերև, ծաղիկ, պտուղ) անհրաժեշտ է հավաքել չոր եղանակին՝ առավոտյան ժամը 8⁰⁰-9⁰⁰ և երեկոյան մինչև 17⁰⁰ ժամանակահատվածում, որովհետև բույսում եղած մակերեսային խոնավությունը կարող է հումքի արագ փչացման պատճառ հանդիսանալ կամ էլ իջեցնել հումքի որակը: Իսկ ստորգետնյա օրգանների (պալար, արմատ, կոճղարմատ) հավաքը կարելի է կատարել ցանկացած ժամանակ: Հովանոցազգի բույսերի պտուղները հասունանում են ոչ միաժամանակ, ճառագայթների մոտ գտնվողները ավելի շուտ: Դրանք հավաքում են այն ժամանակ, երբ հասունացել է պտուղների մոտ 20%-ը: Հավաքից հետո անմիջապես հումքը չեն օգտագործում, այն անհրաժեշտ է չորացնել(3)::

Չորացումը: Չորացման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հումքը պետք է չորացնել ցածր ջերմաստիճանի տակ՝ 25°-30°C և հաստ շերտերով, որպեսզի եթերային յուղերը չցնդեն: Օդաստվերային չորացման ժամանակ հումքը դարսում են 7-10 սմ հաստության շերտով: Եթերայուղ պարունակող դեղահումքը պահում են այլ հոտեր ունեցող հումքից առանձին՝ լավ հերմետիկ փակված վիճակում, մուգ տարաներում: Իսկ ջերմաստիճանը 15° C-ից չպետք է գերազանցի: Կան եթերայուղերի ստացման տարբեր եղանակներ՝ ջրային գոլորշիներով թորման, պրեսացման և սեղման, էքստրակցիայի, անֆլերաժ (ճարպը հազեցնում են եթերայուղով):

Եթերայուղերի հետազոտումը կատարվում է նորմատիվ պահանջներին համապատասխան և նպատակն է հայտնաբերել իսկությունն ու բարորակությունը: Իսկությունն իրականացնելու համար ստուգում են օրգանոլեպիկ հատկանիշները՝ գույնը, հոտը, համը, իսկ հետո՝ ֆիզիկական և քիմիական հատկանիշները: Ֆիզիկապես ստուգվում են ածուխ կլանելու հատկությունը, հազեցվածությունը, լուծելիությունը սպիրտում: Քիմիական հատկանիշներից է՝ թթվայնության քանակի որոշումը, եթերային քանակ և ալկոհոլիկացումից հետո եթերային թվի որոշումը: Յուրաքանչյուր եթերային յուղի կոնկրետ թիվը նշված է ՆՓ-ում:

Աշխատանքում ուսումնասիրել ենք եթերայինյուղեր պարունակող ստորև նշված բույսերի տարածվածությունն Արցախում և դրանց դեղագործական նշանակությունը: Այդ բույսերն են՝ կատվախոտ դեղատու, գիհի սովորական, հազարատերևուկ սովորական, ուրց սովորական, կղմուխ բարձր, սրոհունդ, երիցուկ, ոեհան, նանա:

Աղյուսակ

Արցախում տարածված որոշ էթերայուղատու բույսեր

Բույսի անվանումը				Օգտագործվող մասը	Կիրառությունը	Տարածվածությունը
հհ	Հայերեն	Ռուսերեն	Լատիներեն			
1.	Կատվախոտ դեղատու	ВАЛЕРИАНА ЛЕКАРСТВЕННАЯ	VALERIANA OFFICINALIS	Արմատ, ընձյուղ	Սպազմոլիտիկ, ջերմիջեցնող, հակացնցումային, ցավազրկող, լեղամուղ	միջին լեռնային գոտում
2.	Գիհի սովորական	МОЖЖЕВЕНЬ ЛЬНИК ОБЫКНОВЕННЫЙ	JUNIPERIS COMMUNIS	Պտուղները, տերևները	Խորխաբեր, միզամուղ, ախտահանիչ, ախորժաբեր, լեղամուղ	միջին և բարձր լեռնային գոտու անտառներում
3.	Ուրց սովորական	ТИМЬЯН ОБЫКНОВЕННЫЙ, ПОЛЗУЧИЙ	THIMUS VULGARIS, SERPYLLUM	Ընձյուղը, ծաղիկը	խորխաբեր, հակամիկրոբային, հակաճիճկային, հակաբորբոքային, համեմունք, մեղրատու	ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում
4.	Հազարտերևուկ սովորական	ТЫСЯЧЕЛИСТНИК ОБЫКНОВЕННЫЙ	ACHILEA MILLEFOLIUM	ծաղկաբույլը	արյունականգ, հակաբորբոքային, ախորժաբեր, հակաալերգիկ	ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում
5.	Սրոհունդ	ЗВЕРОБОЙ	HYPERICUM	Ընձյուղը ծաղիկներով	հակաբորբոքային, միզամուղ, լեղամուղ, վերքամոքիչ, ճիճկամուղ, բերանաբորբերի, նյարդային լարվածության, յրվածքների ժամանակ, օդու արտադրության մեջ, որպես համեմունք, թեյին փոխարինող միջոց, մեղրատու, գեղազարդիչ	Բոլոր շրջաններում՝ ծ. մ. -ից մինչև 2300 մ բարձրության վրա
6.	Ռեհան մշակովի	БАЗИЛИК	O.BASILIQUM	թարմ և չորացրած տերևները, ծաղիկը, սերմը	բրոնխիտի, գրիպի, մրսածության և սարսուռի, գլխապտույտի, գլխացավի, միգրենի, դեպրեսիայի, նյարդային հոգնածության, տազնապի, ուշագնացության, պարոդոնտոզի, ստոմատիտի, դիսբակտերիոզի, կոլիտի, մազաթափության դեպքում	Բոլոր շրջաններում
7.	Նանա/դաղձ/	МЯТА	MENTHA	Ընձյուղը ծաղիկներով	Ցավամոքիչ, քրտնաբեր, անոթալայնիչ, խորխաբեր, հրուշակեղենի, լիկյորների, օծանելիքի արտադրությունում, մեղրատու	Բոլոր շրջաններում
8.	Երիցուկ	РОМАШКА	MATRICARIA	ծաղիկները	Քրտնաբեր, կապոդ, ցավազրկող, հակաբորբոքային, միջատասպան	Միջին լեռնային գոտում
9.	Կղմուխ բարձր	ДЕВЯСИЛ ВЫСОКИЙ	INULA HELENIUM	Ծաղիկները, կոճղարմատը	Խորխաբեր, հակաբորբոքային, հակամիկրոբային, հակաճիճկային, խոցերի, էկզեմայի և մաշկային քորի ժամանակ	միջին լեռնային գոտում

ԿԱՏՎԱՆՈՏ ԴԵՂԱՏՈՒ
ВАЛЕРИАНА ЛЕКАРСТВЕННАЯ
VALERIANA OFFICINALIS

Պատկանում է VALERIANACEAE ընտանիքին: 2 մ բարձրությամբ բազմամյա խոտաբույս է: Կոճղարմատն առանցքային է, ծածկված հավելյալ թելանման արմատներով: Հողից հանելիս կոճղարմատը հոտ չունի, երբ առաջանում է իզովալերիանաթթու, ձեռք է բերում բնորոշ սուր հոտ (կատունները վրա են հարձակվում): Ունի դառը համ: Տերևները հակադիր են, կենտ փետրաձև, կտրտված, անհավասարաեզր, գծային, նշտարաձև կամ ձվաձև և աստամնաեզր: Ներքևի տերևները կոթունավոր են, իսկ վերինը՝ նստադիր: Յողունն ուղիղ կանգուն է, մերկ, գլանաձև, ծաղկատար մասում ճյուղավորված: Ծաղիկները բաց վարդագույն են, հնգաթերթ, խողովակաձև, ծաղկաբույլը հուրան է, պտուղը միասերմիկ: Ծաղկում է մայիս-օգոստոսին: Պտուղը հասունանում է հուլիս-սեպտեմբերին: Տարածված է քարքարոտ վայրերում, ճանփեզրին, արևակեզ լեռնալանջերին: Պարունակում է 100-ից ավելի քիմիական միացություններ՝ եթերային յուղեր(2%), սեսկվիտերպեններ(1.5%), բիցիկլիկ տերպեններ, K, Ca, Mg, օսլա, խեժեր և այլ:

Կիրառումը: Բույսի

պրեպարատները քուն չեն առաջացնում, սակայն արգելակելով գլխուղեղի կեղևը, ընդունակ են արագացնելու քնի ֆիզիոլոգիական հասունացումը: Ցուցաբերում է սպազմոլիտիկ ազդեցություն, կարգավորելով սրտի գործունեությունը և ստամոքս-աղիքային ուղու գործառնությունը: Արագացնում է միզարտադրությունը, հանդիսանում է ջերմ իջեցնող, հակացնցումային և ցավազրկող միջոց: Ցուցաբերում է լեղամուղ ազդեցություն: Տարածված է միջին լեռնային գոտում:

ՀԱՋԱՐԱՏԵՐԵՎՈՒԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ
ТЫСЯЧЕЛИСТНИК ОБЫКНОВЕННЫЙ
ACHILEA MILLEFOLIUM

Պատկանում է ASTERACEAE ընտանիքին: Հումքը հայտնի է HERBA անունով: Բազմամյա խոտաբույս է՝ 50-60 սմ բարձրությամբ: Յողունը կանգուն է, ճյուղավորված: Տերևները հերթադիր են, կրկնակի կտրտված, նշտարաձև: Արմատային տերևները կտրտված են, իսկ ցողունայինը՝ նստադիր: Ծաղիկները նեղ են և երկար: Լեզվակավոր ծաղիկները բաց վարդագույն են, խողովակայինը՝ դեղին: Պտուղը ձգված սերմիկ է: Ծաղկում է մայիս – սեպտեմբերին: Տարածված է խոտաշատ վայրերում: Պարունակում է եթերայուղեր՝ սեսկվիտերպեններ, ֆլավանոլիդներ, անտոցիաններ, մեծ քանակով վիտամին, կարոտիններ, դաբաղանյութեր:

Կիրառումը: Հազարատերևուկի խոտից ստացված պրեպարատները ցուցաբերում են արյունականգ, հակաբորբոքային, վերք լավացնող ազդեցություն, հեղուկ մզվածքը և ջրաթուրմը կիրառվում են ստամոքս-աղիքային և արգանդային արյունահոսությունների ժամանակ: Արտաքին ձևով կիրառվում է բերանի խոռոչի ողողումների համար՝ ստոմատիտի և լնդային բորբոքումների ժամանակ: Ախորժաբեր է և հակաալերգիկ:

Տարածված է ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում:

ՈՒՐՑ ՍՈՎՈՐԱԿԱՆ, ԳԵՏՆԱՏԱՐԱԾ
ТИМЬЯН ОБЫКНОВЕННЫЙ, ПОЛЗУЧИЙ
THIMUS VULGARIS, SERPYLLUM,

Պատկանում է LABIATAE ընտանիքին: Կիսաթուփ է՝ 10-30 սմ բարձրությամբ: Յողունը քառանիստ է, ճյուղավորված, ուղիղ կանգուն է: Տերևները հակադիր են, աղեղնաջիղ, կարճ կտրտված, նստադիր, ձվաձև, եզրերը ներքև դարձած, երկու կողմից պատված նուրբ, եթերայուղ պարունակող մազիկներով, որոնց շնորհիվ բույսն ունի սուր, հաճելի, բուրավետ հոտ: Ծաղիկները վարդագույն են կամ կարմիր, երկշուրթ, ներքին շուրթը բաժանված է երեք մասերի: Ունի 4 առեջներ, հավաքված են գլխիկանման հուրան ծաղկաբույլում: Ծաղկում է հունիս-սեպտեմբերին: Պտուղը չոր է, բաժանված ընկուզիկների: Պտուղը հասունանում է օգոստոսին: Աճում է խոնավ հողում, բայց արևոտ տեղամասերում, սոճու և գիհու անտառներում: Հումքն

օգտագործում են էթերայուղ, ջրաթուրմեր, մզվածքներ /էքստրակտներ/ ստանալու նպատակով: Հումքը պարունակում է էթերայուղեր՝ 1%, որի հիմնական բաղադրիչներն են ֆենոլային միացությունները (թիմոլ, կարվակրոլ) և մոնոտերպենները, ինչպես նաև ֆլավոնոիդներ, լորձանյութեր, դառնանյութեր:

Կիրառումը: Ցուցաբերում է խորխաբեր, հակամիկրոբային և հակաբորբոքային ազդեցություն: Ուրցի պրեպարատներն օգտագործում են հազով ուղեկցվող բրոնխաթոքային հիվանդությունների ժամանակ: Կիրառվում են նաև բերանի և բերան-ըմպանային բորբոքումներով ուղեկցվող հիվանդությունների ժամանակ: Նշանակվում են ստամոքս-աղիքային հիվանդությունների ժամանակ, որոնք ուղեկցվում են աղիների սպազմով, մետեորիզմով, որի շնորհիվ կարգավորվում է աղիների միկրոֆլորան: Ուրցի հեղուկ մզվածքը մտնում է «Պերտուսսին» հմալիր պրեպարատի կազմի մեջ, որն օգտագործվում է հազով ուղեկցվող, շնչուղիների սուր և խրոնիկական հիվանդությունների ժամանակ: Թիմոլի շնորհիվ բույսը ցուցաբերում է հակաճիճվային ակտիվություն: Օգտագործում են շաքարային դիաբետի ժամանակ, ինչպես նաև որպես համեմունք: Չարաշահել չի կարելի, այն զոբագեն է, հնարավոր է նաև սրտխառնոց: Հակացուցված է հղիության, լյարդի և երիկամային հիվանդությունների ժամանակ: Պահում են առանձին այլ հումքերից, արևի ճառագայթներից զերծ:

Տարածված է ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում:

ԳԻՉԻ ՍՈՎՈՐԱԿԱՆ

МОЖЖЕВЕЛЬНИК ОБЫКНОВЕННЫЙ

JUNIPERIS COMMUNIS

Պատկանում է CUPRESACEAE ընտանիքին: Մշտադալար թփեր են՝ 1- 3 մ կամ ծառեր՝ 16 մ բարձրության: Լուսասեր են, երկարակյաց, ապրում են 300 տարի: Տերները փշանման են՝ 2- 3 մմ լայնությամբ, կիսաձուլված են կենտրոնական ջիղով: Ցողունի շուրջը դասավորված են 3- ակն: Երկտուն բույս է, արականները թեփուկանման կոներով հավաքված են նուրբ դեղնավուն պատյաններում, բողբոջների ծայրերին կամ տերևածոցերում, իսկ իգականները՝ կղմինդրանման են, դասավորված 3-ակն: Փռչումն ամենամեծ ժամանակ ստորին երկու թեփուկները մնում են, իսկ վերին 3-ը մասկալվում են և հենց առաջին տարում տալիս են գնդաձև կանաչ հատապտուղ, որը 2-րդ տարին դառնում է մուգ կապույտ՝ փխրուն նստվածքով: Կոների հավաքը կատարում են 2-րդ տարում, տակը փռում են քաթան, թափահարում են, հասածները թափվում են: Պտուղները պարունակում են էթերայուղեր՝ բիցիկլիկ տերպեններ, սեսկվիտերպեններ, ցինեոլ, ցիմոլ, լորձեր, շաքար, պեկտինային նյութեր, օրգանական թթուներ:

Կիրառությունը: Խորխաբեր է, միզամուղ, ախտահանիչ, ախորժաբեր, լեղամուղ: Գիտական տառը մեկ օրում կարող է արտադրել մի քանի կգ ֆիտոնցիդ, որն ի վիճակի է վարակագրած պահել մի խոշոր քաղաք(3):

Տարածված է միջին և բարձր լեռնային գոտու անտառներում:

ՄՐՈՀՈՒՆ

ЗВЕРОБОЙ

HYPERICUM

Պատկանում է HYPERICEAE /սրոհունդագգիների/ ընտանիքին

Հայկական տարանունները - արևքուրիկ, եզնածաղիկ դաշտի, թեյի ծաղիկ, հազարածաղիկ:

Համաշխարհային բուսաբուժությունում այս բույսին անվանում են <<դեղաբույս 99 հիվանդության դեմ>>:

Սրոհունդ ցեղը բազմամյա, հազվադեպ՝ միամյա խոտաբույսեր, թփեր, կիսաթփեր են: Ցողունը կանգուն է, ողորկ, վերին մասում՝ ճյուղավորվող, բարձրությունը՝ 15-100 սմ: Տերները հակադիր են, ամբողջական, ձվաձև կամ լայն օվալաձև, լուսաթափանց կետավոր գեղձիկներով: Ծաղկաբույլը հուրանաձև է, վահանաձև կամ ողկուզանման, ծաղիկները՝ դեղին: Ծաղկում է հունիս-սեպտեմբերին: Պտուղը բազմասերմ տուփիկ է: Սերմերը մանր են, փայլուն, դարչնագույն: Մեզ մոտ տարածված են՝ Սրոհունդ անհարթ (H. scabrum), Սրոհունդ սրածայր (H.

acutum), Սրոհունդ խոցված (*H. perforatum*), Սրոհունդ ալպիական (*H. alpestre*) տեսակները: Սրոհունդի շատ տեսակներ դեղաբույսեր են:

Կիրառումը: Պատրաստուկները (ջրաթուրմ, ոգեթուրմ, մզվածք) օգտագործում են որպես հակաբորբոքային, միզամուղ, լեղամուղ, վերքամոքիչ, ճիճվամուղ միջոց, նաև բերանաբորբերի, նյարդային լարվածության, այրվածքների ժամանակ: Խոցված սրոհունդից ստացվել է նովոիմանին հակաբիոտիկը: Սրոհունդի տերևներն օգտագործում են «Սրոհունդ» օդու արտադրության մեջ, նաև որպես համեմունք, թեյին փոխարինող միջոց և այլն: Սրոհունդի որոշ տեսակներ թունավոր են գյուղատնտեսական կենդանիների համար: Մեղրատու է և գեղազարդիչ: Ունի ֆիտոնցիդային հատկություն: Աճում են չոր և լուսառատ տարածքներում, անտառային և անտառատափաստանային գոտիներում, ծովի մակերևույթից մինչև 2300 մ բարձրության վրա՝ հաճախ տալով ցրված բուսուտներ:

ԿՂՍՈՒՆ ԲԱՐՁՐ

ДЕВЯСИЛ ВЫСОКИЙ

INULA HELENIUM

Պատկանում է ASTERACEAE ընտանիքին: 1,5 մ բարձրության բազմամյա խոտաբույս է: Ցողունը կանգուն է, մազեպատ և քիչ ճյուղավորված: Տերևները հերթադիր են, անհավասար, ատամնաեզր, արմատայինը՝ օվալաձև և էլիպսաձև, ցողունայինը՝ ձվաձև, հիմքում՝ սրտաձև, իսկ վերևի տերևները՝ նստադիր: Բույսի գազաթին լինում են մի քանի ծաղիկներ, որոնց եզրայինները երկար, նեղ լեզվակավոր են, դեղնասուկեգույն, իսկ միջին ծաղիկները՝ խողովակաձև: Պտուղը քառանիստ սերմիկ է: Բազմանում է սերմերով: Կոճղարմատը հաստ է, կարճ, բազմազլխիկ: Տարածված էխոնավ վայրերում: Ծաղկում է հուլիս– սեպտեմբերին: Բույսը պարունակում է եթերային յուղեր՝ ալանտոլակտոն, բազմաշաքարներ (ինուլին), խեժեր: **Կիրառումը:** Խորխաբեր է (իջեցնում է բրոնխների սեկրետոր ակտիվությունը), հակաբորբոքային, հակամիկրոբային, հակաճիճվային: Կիրառվում է շնչառական(հազի, բրոնխոսպազմի), ստամոքս-աղիքային (խոցի) ուղիների սուր և խրոնիկական բորբոքումների, էկզեմայի և մաշկային քորի ժամանակ:

ՌԵՀՍՆ

БАЗИЛИК

O.BASILICUM

Պատկանում է LABIATAE /շրթնածաղկավորներ կամ խուլեղինջազգիներ/ ընտանիքին: Տարանուններն են՝ արքայիկ, ասպրամ, պատրուճ: Ցեղում ընդգրկված ներկայացուցիչները խոտաբույսեր կամ կիսաթփեր են: Հայտնի է 50 տեսակ, սակայն առավել տարածված են ռեհանի 2 հիմնական տեսակները՝

Ռեհան կամֆոռային՝ *Ocimum menthifolium*

Ռեհան էվգենոլային՝ *O. Gratissimum*

Արցախի բոլոր մարզերում տարածված է Ռեհան մշակովին՝ *Ocimum basilicum*, որը միամյա բույս է: Ցողունն ուղղաձիգ է, քառանիստ, մինչև 40-80 սմ բարձրության: Արմատն առանցքային է, բազմաթիվ կողային ճյուղավորումներով: Տերևները, ցողունը և ծաղկաբաժակները ծածկված են մազիկներով, որոնց մի մասի բջիջներում կան եթերային յուղեր պարունակող գեղձիկներ: Ծաղկում է հունիսից մինչև հոկտեմբեր: Բազմանում է բացառապես սերմերով, ջերմասեր և խոնավասեր բույս է:

Ռեհանն օգտակար բույս է և անփոխարինելի համեմունք: Հարուստ է եթերային յուղերով և C, B₁, B₂, PP վիտամիններով: Ռեհանն օգտագործվում է նաև որպես տնական խոտային կոսմետիկայի բաղադրիչ: Այն մշակում են նաև կամֆորա և էվգենոլ ստանալու համար:

Կիրառումը: Բժշկության մեջ ռեհանն օգտագործվում է ստամոքսի ցավերը բուժելու, բրոնխիտի, գրիպի, մրսածության և սարսուռի, գլխապտույտի, գլխացավի, միգրենի, դեպրեսիայի, նյարդային հոգնածության, տագնապի, ուշագնացության, պարոդոնտոզի, ստոմատիտի, դիսբակտերիոզի, կոլիտի, մազաթափության դեպքում: Այն նպաստում է կերակուրների լավ մարսմանը: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում են թարմ և

չորացրած տերևները, ծաղիկը, սերմը: Տերևը պետք է հավաքել ծաղկման շրջանում, չորացնել օդափոխվող ծածկի տակ, որպեսզի պահպանվի գույնը:

ԱՆԱՆՈՒԽ, ԴԱՂՁ

МЯТА

MENTHA

Պատկանում է LABIATAE /շրթնածաղկավորների կամ խուլեղինջագգիների/ ընտանիքին: Անանուխը (դաղձ). բազմամյա, կոճղարմատավոր վայրի կամ մշակովի խոտաբույս է: Հայտնի է մոտ 20 տեսակ, Արցախում հանդիպում են հետևյալ տեսակները. դաղձ դաշտային/ *M. arvensis* /, Դ. երկարատերև / *M. Longifolia*/, Դ. լվածաղիկ/ *M. Pulegium*/: Մշակության մեջ տարածված են պղպեղահամ անանուխը /*M. piperita*/ և գանգուր անանուխը / *M. crispata* /: Աճում են ամենուրեք: Բույսը ցրտադիմացկուն է, խոնավասեր ու պահանջկոտ լույսի նկատմամբ, իսկ շոգ եղանակին, աճը խիստ դանդաղում է: Ծաղկում է հիմնականում հուլիս-օգոստոս ամիսներին: Բուժման նպատակով հիմնականում օգտագործում են բույսի տերևները: Հումքը հավաքում են ծաղկման ժամանակ, մի քանի ժամ թողնում են արևի տակ, հետո լրիվ չորացնում քամոտ վայրում, այսինքն՝ համեմատաբար հով տեղում: Այս բույսի ցեղի «մենթա» անվանումը ծագել է հին հունական դիցաբանության հավերժահարս Մինթայի անունից, որին բուսաշխարհի աստվածուհին՝ Պերսեֆոնեն, դարձրեց անանուխ՝ Աֆրոդիտեին նվիրելու համար:

Կիրառումը: Տերևները և ծաղիկները պարունակում են եթերայուղ, կարոտին, մենթոլ և այլն: Մենթոլն ունի անոթալայնիչ, հանգստացնող և տեղային ցավամոքիչ ներգործություն: Մտնում է վալիդոլի, Զելենինի կաթիլների և այլ պատրաստուկների բաղադրության մեջ: Տերևների թուրմն օգտագործվում է մարսողության կանոնավորման, լնդերի բորբոքման, սրտխառնոցի և այլ դեպքերում: Բժշկության մեջ կիրառվում է ոչ միայն բուսահումքը, այլ նաև նրանից ստացվող եթերայուղերը: Բույսի կաթիլներն ու եփուկը լոզանքի ձևով օգտագործում են երեխաների ռախիտի, գեղձախտի, աղեստամոքսային ուղու խանգարումների ժամանակ: Տերևների թրջոցն օգտագործում են ռևմատիկ հոդացավերի ժամանակ: Նանայով համեմում են շատ ըմպելիքներ և սննդատեսակներ: Այն լայն կիրառում ունի նաև կոսմետոլոգիայում:

ԵՐԻՑՈՒՎ

ПОМАШКА

MATRICARIA

Պատկանում է COMPOSITAE /բարդածաղկավորների/ կամ /աստղածաղկավորների/ ASTERACEAE ընտանիքին: Հայկական տարածություններն են՝ օշոշ, հավածաղիկ, արգանդախոտ, խնձաղեղ, կոկոռճիկ, կուծուռի, լալապնդիկ: Բույսն ունի մի քանի տեսակներ և նմանակներ: Միամյա, բազմամյա խոտաբույսեր են՝ փետրածաղի տերևներով: Ծաղկաբույրը զամբյուղ է, եզրային ծաղիկներն իգական են, սպիտակ, մեջտեղինը՝ երկսեռ, խողովակաձև, դեղին: Պտուղը սերմնապտուղ է: Հայտնի է երիցուկի մոտ 70 տեսակ, տարածված է հիմնականում հս. կիսագնդում: Մեզ մոտ առավել տարածված տեսակներից է՝ Երիցուկ հոտավետը /*M. suaveolens*, *M. Discoidea*/, որի մոտ բացակայում են կեղծ լեզվակավոր ծաղիկները: Բերվել է Հյ. Ամերիկայից, որը մի քանի տարում տարածվել է ամբողջ նախկին ԽՍՀՄ-ում: Հաջորդը՝ երիցուկ դեղատնայինը (*M. chamomilla*), որն ուժեղ ճյուղավորված,

միամյա բույս է: Ծաղկի զամբյուղներում կա 0,25% եթերայուղ: Բերքահավաքի լավագույն ժամկետը ծաղկման փուլն է: Բժշկության մեջ օգտագործվում է որպես լեղամուղ, քրտնաբեր, ախորժաբեր, հականեխիչ, հակաջղաձիգ միջոց: Թուրմն օգտագործվում է հոգնաների, ողողումների, ինչպես նաև մազերը գունաթափելու համար: Երիցուկ դավաթինյան և կովկասյան տեսակները պարունակում են պիրեթրին նյութը, որը որպես միջատասպան օգտագործվում է գյուղատնտեսական բույսերի վնասատուների, մարդու և կենդանիների մակաբույծ միջատների (փայտոջիլ, ոջիլ, ճանճեր) դեմ պայքարելիս, ինչպես նաև քոսի բուժման ժամանակ:

Կիրառումը: Դեղատնային երիցուկը լայնորեն օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ: Բույսի պատրաստուկներն ունեն հանգստացնող, հականեխիչ, հակաբորբոքային,

վարակազերծ հատկություն: Բույսի եթերային յուղը լավացնում է շնչառությունը, լայնացնում գլխուղեղի անոթները: Բույսի պատրաստուկներն օգտագործվում են բազմաթիվ հիվանդությունների դեպքում, ընդգրկվում են դեղաբուսային փնջերի մեջ: Սուր և քրոնիկ ստամոքսաբորբի, ստամոքսի խոցի, կոլիտի դեպքում կիրառվում է երիցուկի, վաղենակի, հազարատերևուկի խառնուրդը(1): Դեղատնային երիցուկը կիրառվում է օժանելիքի արտադրության մեջ:

Հանդիպում է միջին լեռնային գոտում:

Այսպիսով, Արցախի տարածքում մեր կողմից ուսումնասիրված եթերայուղատու բույսերի տեսակների քանակը կազմում է 9-ը, մեր հետազոտությունները վերջնական չեն ու կկրեն շարունակական բնույթ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Լ. Հարությունյան, Ֆիտոթերապիա, Երևան, 2001.
2. Լ.Վ. Հարությունյան, Ա.Լ. Հարությունյան, Հայաստանի դենդրոֆլորան, Հատոր 2, Երևան, 1986.
3. Универсальная энциклопедия лекарственных растений, Минск-Москва 2000

**Տեղեկություններ հեղինակների մասին`
armidahakobyan_1@mail.ru**

Նոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, գ.գ.դ., Գ.Ա. Նակոբյանը: